

ԺԱԻ

Արվեստի քննադատության եւ կուրատորական ուսումնասիրությունների դպրոց

Ընդունելության կարգի եւ պայմանների մասին ուղեցույց

Ծրագիրը դիմորդներին առաջարկում է գրանցման ու մասնակցության երեք կարգավիճակ.

Ուսանողի`

Նրանք ովքեր ցանկանում են դառնալ ուսանող, պետք է լրացնեն Դիմորդի գրանցման թերթիկը, info@ica.am հասցեով ուղարկեն իրենց CV -ն, շարժառիթների(մոտիվացիոն) նամակ, ինչպես նաեւ համառոտ էսսե (մինչեւ 1000 բառ) արվեստի այս կամ այն երեսուրթի կամ իրադարձության շուրջ(թեման կամ ոլորտը թողնված է դիմորդի հայեցողությանը:

Ընդհանուր մասնագիտական մոդուլին գրանցվող ուսանողի ուսման վարձը 125 000 դրամ է: Երկրորդ մոդուլին ուսանողի մասնակցությունը պայմանավորված է առաջին մոդուլի ընթացքում նրա գրանցած առաջադիմությամբ: Այս մոդուլում ուսումն անվճար է: Երրորդ` ավարտական աշխատանքի մոդուլի ընթացքում ուսանողը ստանում է նաեւ պարգևավճարի կամ նախագիծն իրականացնելու համար անհրաժեշտ գումարի հնարավորություն:

Ունկնդրի`

Նրանք, ովքեր ցանկանում են գրանցվել իբրեւ սովորելու պարտավորություններ չունեցող ազատ ունկնդիր, կարող են ընտրել դասընթացներից որեւէ մեկը: Մեկից ավելի դասընթաց ընտրելու պարագայում մեկ դասընթացի համար նախատեսվող վարձավճարը կրճատվում է հետեւյալ պրոգրեսիայով,

1 դասընթացը- 45 000 դրամ

2 դասընթացը -70 000 դրամ

3 դասընթացը- 90 000 դրամ

Այցելուի

Նրանք, ովքեր ցանկանում են ներկա գտնվել մեկ կամ մի քանի դասախոսությունների, կարող են ձեռք բերել այցելուի կտրոն եւ ազատ են ընտրել, թե որ դասախոսություններին ներկա գտնվեն: Կտրոնի գինը կախված է տրացակի պարունակած կտրոնների քանակից

1 դասախոսություն համար նախատեսված կտրոնի գինը- 4500 դրամ

5 դասախոսության համար նախատեսված կտրոնների տրցակի գինը-20 000 դրամ

10 դասախոսության համար նախատեսված կտրոնների տրցակի գինը-35 000 դրամ